

անոնց զարմանումին գրիթէ անկերպարան ու անորոշ փիճակը, որ Ազգերանդրեան ժամանակներու մէջ ալ մեծ փոփոխութիւն մը չի կրելով, հասիւ Միջին դարու մէջ, բայց աւելի վերածնութեան դարու առարկայ կ'ըլլայ մասնաւոր ուշադրութեան, շնորհիւ Տէրաթի, Բասկալի, Լայպնիճի, Նեւտոնի, Մարգոնանշի պէս հոյակապ իմաստասէրներու, և լուրջ ուսումնասիրութեան նիւթ կ'ըլլայ, Բլաթէն, Տանիէլ Սէննէն, Սիաւննամ, Ռիլլէն, Ինչպէս նաեւ Ռօպէրտսըն, Սթալբրիչիներու և 17^{րդ} դարուն վերջն ալ Իտալացի Բակլիլիի մեծանուն բժշկին, զոր հայածին կը հրատարակէ, սղբացեալն Հ. Ղեւնդ Վ. Ալիշան: Ասոնց հարթած շաղկին մէջն է որ ընթանալ կը սկսին 18^{րդ} դարու բժշկիներէն Վիէօսանո, Հօֆման, Պօէրալ, Մօսկանի, Բիէն Բօմ, Քիլլէն և ուրիշներ, որոնք կարեւոր աշխատութիւններով ու փորձարկութիւններով մեծ յառաջադիմութեան մէջ կը գնեն ջլախատորներու զարմանումի հզանակը, և մանաւանդ կը յաջողին հէզ մտախտաւորները ազատել իրենց ախտը կաշտութենէն, փրկել զանոնք յանցապարտի կտանքներէն, Պրոկստեան չարչարանքներէն, և իրբե պարզ հիւանդներ արժանի ընել զանոնք զթութեան յարկերու ու մասնաւոր բժշկական ինամքներու:

Ասոնցմէ յետոյ կը ծնի նշանաւոր Բինէլլը, որ 18^{րդ} դարու վերջերն ու 19^{րդ} սկիզբները բուրբովին նոր թուական մը կը բանայ ջղագարմանութեան. Բինէլ հիմնադրատակ կ'ընէ բոլոր հին վարդապետութիւնները, և յաւթական փառքի արժանաւոր ետանդով կը հիմնէ Սալբէթոիէոի այն մեծ գլոցը, միմիայն ջլախատորներու յատուկ Փարիզեան այն արեղերահոշակ զարմանատունը, ուր յետոյ՝ Էսքրիօնի, Լասէկիներ, և վերջ ի վերջոյ ալ Շառքօ, Մօսօ ար Թուս, Պալ, Ժօֆուս, Օկիլոս Վուալէն, անցեալ և ներկայ դարու նշանաւոր գիտուններ, իրենց հսկայ գործերով և անման աշխատութիւններով ստեղծեցին այն հզօր միջոցները, որոնցմով այսօր ջլախատոր և մտախտաւոր հիւանդներ ամէն տեղ կը վայելին գիտութեան բարերար ինամքներն և բուժիչ զարմանները:

Պանծալի գործ, որուն հեղինակներուն յիշատակը աօքթ. Քօլօլեանց հիանալի ներբողեանով մը անմահացունելէ յետոյ, կը սխի իր երկին Երկրորդ Մասը, զոր նուիրած է ջղային և մտային հիւանդութիւններու Ընդհանուր Գարմանաբանութեան, Հատորին ամէնէն կարեւոր մասն է այս, որուն մէջ քարոզած լուսագոյն միջոցներէն կը յիշեմ միայն ամէնէն նորագոյն և ուշադրութեան արժանի զարմանումը, isolement (մեկուսացում) և alitement (մանձարկում) բուսածը, Էսքրիօնի, Վէն Միչէլի քարոզած այդ երկու հզօր միջոցները, որուն նպատակն է՝ մտախտաւորը կամ ջլախատորը զատել իրեններէն, հանել իւր միջավայրէն, և զայն մեկուսացունել առանձին տեղ մը մասնաւոր սենեակի մէջ, ուր օրուան մեծ մասը անկողինի մէջ անցունել կու տան անոր, կարգաւ, գրեւ, բարեկամի, ազգականի հետ տեսնուիլ կ'արգիլուի հիւանդին, որ միայն իւր հսկողին և զարմանիչ բժիշկին այցելութիւնը կ'ունենայ, հիւանդութեան համեմատ, ամիս մը, երկու ամիս և աւելի կը տեւէ զարմանումի այս հզանակը, որուն վրայ հեղհեղէ կ'աւելնայ նաեւ ջրաբուժական զանազան տեսակներ, պտոյա, ժամանց և այլն: Isolement-alitementը շատ մեծ հրաշքներ կը գործէ այսօր բժշկութեան մէջ, և անզարմանելի կարծուած ջղային ու մտային շատ փիճակներ բուժուելով կը բուժուին շնորհիւ այս միջոցին: Գժրախտաբար՝ արեւելքցիներու համար անձանօթ բաներ են զես isolementը, alitementը. անոնք լոկ բաւեր են մեր ականջին հնչող, որոնց պարզ և անձախ գործադրութիւնը մեր Ազգային հիւանդանոցին մէջ զես գոյութիւն չունի:

Բաւական երկար բացատրելէ յետոյ Մեկուսացումի և Մանձարկումի կատարման եւ զանակները, աօքթ. Քօլօլեան կ'անցնի Գ Մասին, ջլախատորներու սննդեան մասին, որուն մէջ իրբե կերակուր, կ'ընդունի նախ կաթը, կաթը այր, կենսասու կաթը նախ, և յետոյ ուրիշ կերակուրներ, անոնք ալ կարգաւ և տակաւ, զի առանց կերակուրներու զուշութեան, առանց ստամոքսի և աղիճնորդներու հանդարտութեան, առանց կաթի, մե-